ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԿԱՐԳ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՒՅՍ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Օգոստոսի 22-ին, կիրակի օրը, լրացավ երջանկահիշատակ Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 5-րդ տարելիցը, որի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ (պատարագիչ՝ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյան):

Հավարտ Սուրբ Պատարագի՝ հոգեհանգստյան հատուկ պաշտոն կատարվեց երանաշնորհ Վազգեն Ա Հայրապետի հոգու հանգստյան համար:

Այս առիթով մի անգամ ևս հոգևորականների և հավատացյալների կողմից աղոթք բարձրացվեց առ Աստված՝ վասն հոգվո խաղաղության հանգուցյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ